ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

22 հունիս 2021թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին, խորհրդի անդամներից հարգելի պատճառներով բացակայում էին Լ. Ղալումյանը և Մ. Մելքումյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
2. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում: (Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ)
3. Առկա ուսուցման 1-ին կիսամյակում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքների ներկայացում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
4. ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետություն: (Զեկուցող՝ ԿԾ պատասխանատուներ)
5. 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամ-փոփում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)
6. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում:(Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ)
7. Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահի կատարած աշխատանքների ներկայացում և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահի հաշվետվություն: (Զեկուցող՝ ՈՒԽ և ՈՒԳԸ ֆակուլտետի նախագահներ)
8. Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն: (Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա. Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 8 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Ամբիոնի կողմից իրականացվող դասընթացներն են՝ «Պորտֆոլիո»-ն և «Նախագծում-7»-ը: Քննությունների գնահատման ձևը հանրագումարային է և ունեցել են հետևյալ տեսքը.

«Պորտֆոլիո» առարկայից քննությանը մասնակցել է 19 ուսանող, որից 3-ը ստացել է գերազանց, 14-ը՝ լավ և 2-ը՝ բավարար: «Նախագծում-7» առարկայից 5 ուսանող ստացել է գերազանց, 6-ը՝ լավ, 8-ը՝ բավարար:

Զեկուցողը նշեց, որ «Պորտֆոլիո» առարկայի քննությունից հետո կատարված աշխատանքները հավաքվել են և առաջիկայում նախատեսվում է լավագույն աշխատանքների տպագրություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Հ. Մխիթարյանը, Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա IV կուրսի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան երկու ամբիոնի վարիչները՝ Հ. Ասատրյանը և Մ. Ստեփանյանը: Զեկուցողները ներկայացրեցին

ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունները:

«Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը նշեց, որ ամբիոնի առարկաները բոլորը բաշխված են և թափուր ժամեր չկան:

«Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչ Մ Ստեփանյանը ներկայացրեց ամբիոնի անհատական ծանրաբեռնվածությունը և ավելացրեց, որ ի տարբերություն մյուս ամբիոնի, այստեղ կան թափուր առարկաներ և ունեն դասախոսների պակաս: Նա նշեց, որ հաշվի է առնվել դասախոսների մասնագիտական կարողությունները, նախորդ տարիների դասավանդման փորձը, քննարկումների արդյունքում կատարվեց դասաժամերի նախնական բաշխում՝ թողնելով նաև թափուր ժամեր: Յուրաքանչյուր դասախոս ստացել է 2021-2022թթ. ուստարվա իր նախնական ծանրաբեռնվածությունը: Զեկուցողը նշեց, որ ամբիոնում մնացացած թափուր առարկաների դասաժամերը կազմում են 1162ժամ: Առայժմ 1-ին կիսամյակի առարկաներից բաշխված չէ «Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա-1», «Հագուստի նախագծում-1», «Դիզայնի պատմություն», «Մետաղի գեղարվեստական մշակում-1», «Խեցեգործություն-1» մոդուլները: Զեկուցողը նշեց, որ նշված մոդուլների համար դիտարկվում են հրավիրյալ մասնագետների թեկնածություններ և հաջորդ ուստարվա համար խնդիրը կարգավորված կլինի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ան. Չիբուխչյանը, Տ. Բագամյանը, Հ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների նախնական բաշխման գործընթացը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց առկա ուսուցման 1-ին կիսամյակում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները: Զեկուցողը նշեց, որ բավականին բարձր արդյունքներ են գրանցվել: Դասախոսների

գնահատման պատկերը միջինը կազմել է 4.68, ֆակուլտետինը՝ 4.70, դեկանատինը՝ 4.67:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ան. Չիբուխչյանը, Հ. ասատրյանը Հ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առկա ուսուցման 1-ին կիսամյակի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ԿԾ պատասխանատուներ՝ Լ. Ֆլջյանը և Գ. Ջավրուշյանը: Նրանք ներկայացրեցին ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետություն:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ»-ի կրթական ծրագրի ղեկավար Լ. Ֆլջյանը նշեց, որ երկար ժամանակ չէր հաջողվում կրթական ծրագիրը վերջնական տեսքի բերել: Աշխատանքային խմբի ջանքերով այն արդեն պատրաստ է, խմբագրված և առաջին իսկ հնարավորության դեպքում կուղարկվի արտաքին փորձաքննության:

«Դիզայն» կրթական ծրագրի ղեկավար Գ. Ջավրուշյանը նշեց, որ չնայած ստեղծվել է աշխատանքային խումբ, եղել են հանդիպումներ, քննարկումներ, բայց որոշակի թվով առարկաների մոդուլի նկարագրիչները դեռևս վերջնական տեսքի չեն բերված: Աշխատանքները դեռևս շարունակվում են և առաջիկայում կրթական ծրագիրը պատրաստ կլինի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետությունը համարել բավարար:

2. «Դիզայն» կրթական ծրագրի աշխատանքային խմբին հանձնարարել հնարավորինս սեղմ ժամկետում ավարտուն տեսքի բերել կատարվող աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խերհրդի նախագահ՝ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքների պաշտպանությունը տեղի է ունեցել 29.05.21թ., մասնակցել են 19 ուսանողներ, որոնցից 10 ուսանող ստացել է գերազանց գնահատականներ, իսկ 9-ը՝ լավ: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացնող են:

Նա նշեց, որ «Դիզայն» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի դիզայնի ամբիոնի դոցենտ, ՀՀ ԴՄ անդամ, ԴՄԱ անդամ Վահագն Լյովայի Պողոսյանը:

Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել «Գծագրական երկրաչափություն» առարկային, կարևորել շրիֆտի դերը գրաֆիկական աշխատանքներ կատարելիս, նախագծային տարբեր գունային առաջարկներ ունենալ, կարևորել թեմաների ընտրության ժամանակ կիրառելիության հնարավորությունը, նորարարական միտումները, ժամանակակից եռաչափ համակարգչային ծրագրերի օգտագործումը ավարտական աշխատանքների կատարման ընթացքում: Հարկ է ավելի շատ ուշադրություն դարձնել տեսական նյութի և գործնականի համադրմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ. Ստեփանյանը, Հ. Ասատրյանը, Հ. Մխիթարյանը, Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի վեցերորդ հարցի վերաբերյալ հանդես եկան «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտներ, ՀԲ ղեկավարներ Ք. Մխիթարյանը և Ան. Չիբուխչյանը: Նրանք ներկայացրեցին 2-րդ կիսամյակում իրենց ղեկավարությամբ իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները և նշեցին, որ հետազոտական աշխատանքն ուսանողների համար եղել է մասնագիտական և ուսուցողական հիանալի փորձ: Նրանք նշեցին, որ 1-ին կիսամյակում ՀԲ առաջին անգամ էր անցկացվում, կային որոշակի բացթողումներ և թերացումներ, որոնք լրացվել և շտկվել են երկրորդ կիսամյակում: Ղեկավարները նաև շեշտեցին, որ ուսանողների դրական արձագանքները թույլ են տալիս հետազոտական աշխատանքների դերը համարել հաջողված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը. Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի յոթերորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մ. Ռնազյանը և ՈՒԽ նախագահ Է. Գալստյանը: Նրանք ներկայացրին կատարած աշխատանքների հաշվետվությունները (Հաշվետվությունները կցվում են՝ Հավելված 1, Հավելված 2):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը. Հ. Ասատրյանը, Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ուսանողական կառույցների նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն :

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի ութերորդ հարցի վերաբերյալ հանդես եկան «Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն»-ի և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչները: Նրանք ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների ներկայացրին կատարված աշխատանքների հաշվետվությունները (Հաշվետվությունները կցվում են՝ Հավելված 3, Հավելված 4):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը, Հ. Մխիթարյանը, Տ. Բագամյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվությունները ընդունել ի գիտություն:

2. Ամբիոնների կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան

Հավելված 1

Հաշվետվություն

Կիրառական արվեստի ֆակուլտետի

ՈՒսանողական խորհրդի կիսամյակային գործունեության

(2020-2021 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

№	Նախատեսվող միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկաց-ման օրը/ շաբաթը	Համառոտ նկարագրությունը
1.	Կինոդիտում	Նռան գույնը	12.03.21 15:00	Կիրառական արվեստի դահլիճում տեղի ունեցավ ֆիլմի ցուցադրությունը՝ նպատակ հետապնդելով խթանել ուսանողների աշխարհայացքի, բարձր գիտակցության և ճաշակի ձեւավորումը, ինչպես նաև նպաստել սեփական մշակույթի ճանաչմանը:
2.	Պրեզենտացիա	Ժան Միշել Բասքիա. կյանքը և ստեղծագործու-թյունը	09.04.21	Կազմված պրեզենտացիան ներկայացնում էր նկարչի կյանքը և ստեղծագործությունները, հետաքրքիր փաստեր վերջինիս մասին:

ԵՊՀ ԻՄ ԿԱՖ ՈՒԽ նախագահ՝ Է. Գալստյան

Հավելված 2

Հաշվետվություն

Կիրառական արվեստի ֆակուլտետի

ՈՒսանողական գիտական ընկերության

կիսամյակային գործունեության

(2020-2021 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

Հ/Հ	Միջոցառմանբնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Լոգոների մրցույթ	Նորաձևություն»	03.24-04.28	Մրցույթի նպատակն էր զարգացնել ուսանողների ստեղծագործական միտքը: ՈՒԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց մրցույթի հայտադիմումը: Հատուկ հանձնաժողովի կողմից, մրցութային կարգով ընտրվեց լավագույն լոգոն: Հաղթողը պարգևատրվեց նվերով:
2.	Այց-իրազեկում	«Կողբի գեղարվեստատի դպրոց»	05.17	Կատարվեց ԿԱՖ ի ուսանողների այց Կողբի գեղարվեստի դպրոց: Այցի ընթացքում ուսանողները ծանոթացանան դպրոցի գործունեությանը, ինչպես նաև ներգրավվեցին դպրոցում կայանալիք բուն գործընթացի իրականացմանը: Դպրոցի մանկավարժ Արայիկ Ղուլիջանյանը ոսանողները ծանոթացրեց համակարգչային մոդելավորման Zbrush ծրագրին: Իրականացվեց այց Սուրբ Հովհաննես եկեղեցի, Կողբի մշակույթի տուն, պատմության թագարան:

3.	Կինոդիտում	Հավերժության շեմին	05.19	ՈՒԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց կինոդիտման հայտադիմումը: Կինոդիտման նպատակն էր ծանոթանալ Վան Գոգի կյանքի վերջին տարիներին ու ստեղծագործական գործունեությանը:
4.	Դասընթաց-սեմինար	Սանդրո Բոտիչելլի	05.19	Դասընթացը իրականացվեց օնլայն հարթակում: ՈՒԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց կինոդիտման հայտադիմումը: Դասընթացի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել նկարչի կյանքին և ստեղծագործություններին, ինչպես նաև ստեղծագործությունների վերաբերյալ կատարվեց քննարկում:

ԵՊՀ ԻՄ ԿԱՖ ՈՒԳԸ նախագահ՝ Մարիամ Ռնազյան

Հավելված 3

ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստորաբաժանման անունը՝ Դեկորատիվ -կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն

ՌԾ գործողությունը	**Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում**	**Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)**	**Ի՞նչ չի իրականացվել և ինչո՞ւ**	**Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում**
1.2. 2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրա-խուսման և տարածման մեխա-նիզմ-ները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Արձան. N 6 16.04.21թ.		Ուստարվա ընթաց-քում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ ու-սումնասիրելու դա-սախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը, անց են կացվել վարպետաց դասեր:
1.2.3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունավետ և ձևավորվող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Ուստարվա սկզբին մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում): Արձան. N 5 16.02.21թ.	Ձեռնարկներ չեն ստեղծվել:	Արտաքին կապերի հանձնաժողովիկողմից կազմակերպված «Էթիկան էթիկետ» քառօրյա դասընթաց-սեմինարը, որը կվար ի ք.գ.թ. Հ.Մովսեսյանը:
1.2. 6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են մեխանիկական արտագրությունները գիտաուսում-նական աղբյուր-ներից: Իրա-կանացվել է ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողու-թյուն:		Ուստարվա ընթացքում ուսանողների հետ անցկացնել զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին:

1.3.3.Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ, ըստ անհրաժեշտության, բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների կողմից դասախոսների վերաբերյալ անցկացված սոց հարցումների արդյունքները, արվել են հետևություններ:		Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ, ըստ անհրաժեշտության, բարձրաձայնվել են նկատված թերությունները, բքննարկվել են ուսանողների կողմից դասախոսների վերաբերյալ անցկացված սոց հարցումների արդյունքները, անել հետևություններ:
1.3.4 Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը:		Գործող մասնաբաժին Դասընթացների և ծրագրերի գնահատման ԵՊՀ-ի պորտալում:		
1.4. 1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվեր-սալ էլեկտրոնային համակարգ՝ ուսում-նառության ռեսուրս-ների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորությունների կիրառություն ուսուցման գործընթացում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի միջոցով:		
1.4. 3. Վերապատ-րաստել դասա-խոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռե-սուրսների ստեղծման և մա-տուցման համար:	Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով ապահովվել են դասընթացները:		
1.4.5.Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազ-մակերպում:	Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:		Ուսումնական տարվա ընթացքում շարունակել ծրագրերի համար էլեկտրոնային տարբերակների մշակումն ու տեղադրումը համացանցում:
1.4.6. Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ դասախոսների համար:	Դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:			Համավարակի պատճառով ոչինչ չի պլանավորվել:
1.4.7.Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրակա-նացվող դասընթաց-ները:	Արդի պահանջներին համապատասխանող ուսուցման ապահովում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի միջոցով:		

2.1. 3. Խրախուսել ՈւԳԸ շրջանակ-ներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկա-վարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում ստեղծագործական աշխատանքի նկատմամբ:	ԻՄ-ի ՈւԳԸ-ի և դեկորատիվ -կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ կապեր և համագործակցության բարձր ակտիվություն:		Ուսումնական տարվա ընթացքում խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանող-ների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը և ցուցահանդեսների մասնակցությունը:
2.2.1. Աջակցել մշակույթային կենտ-րոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրականացմանը:	Մարզի անհատ ստեղծագործողների հետ կապի ամրապնդում՝ մարզում մշակութային միջավայրի զարգացման նպատակով:	Մայիսի 17-ին կիրառական արվեստի ֆակուլտետի II և III կուրսի ուսանողները ճանաչողական այցը Կողբի գեղարվեստի դպրոց:		Ուսումնական տարվա ընթացքում աշխուժացնել մարզի մշակույթային կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ:
2.3.3. Կազմակերպել արվեստին վերաբերվող մշակույթային միջոցառումներ, ուսանողների և մասնաճյուղի դասախոսների մասնակցությամբ:	Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում տարբեր կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի դասախոսների և ուսանողների մաս-նակցության աճ:	Ապրիլի 23-ին Գյումրիում Ռուսական տան հետ համագործակցության շրջանակներում Շիրակի պետական համալսարանի աշխատանքային խումբն այցելել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ:		Շիրակի պետական համալսարանի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նախնական պայմանավորվածություն ձեռք բերեցին փորձի փոխանակման նպատակով համատեղ պլեներներ կազմակերպել՝ արվեստի ամբիոնների ուսանողների մասնակցությամբ:
2.3. 4. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարու-նակականությանն ու խորացմանը:	Համագործակցություն արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ:	Մայիսի 1-ին ԵՊՀ ԻՄ-ում հյուրընկալվել է հարգարժան Նատալյա Ռոտենբերգը, ով հանդիսանում է NR Foundation-ի հիմնադիրը: Նատալյա Ռոտենբերգը ներկաների համար անց կացրեց վարպետության դաս «Լուսավորելով երազանքի ճանապարհը» թեմայով:		
8.1. 2. Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտա-կան դրամա-շնորհային ծրագրե-րին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրություն՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու ձգտում:			

Ամբիոնի վարիչ՝ **ՄՀԵՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված 4

ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստորաբաժանման անունը՝ Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն

ՌԾ գործողությունը	**Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում**	**Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)**	**Ի՞նչ չի իրականացվել և ինչո՞ւ**	**Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում**
1.2. 2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Արձան. N 6 15.04.21թ.		Ուստարվա ընթացքում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ ըստ ժամանակացույցի, ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը, անց են կացվել վարպետաց դասեր:
1.2.3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունավետ և ձևավորվող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Ուստարվա սկզբին մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում): Արձան. N 5 16.02.21թ. և 19.02.21թ	Ձեռնարկներ չեն ստեղծվել:	Արտաքին կապերի հանձնաժողովիկողմից կազմակերպված «Էթիկան էթիկետ» քառօրյա դասընթաց-սեմինարը, որը վարեց ք.գ.թ. Հ.Մովսեսյանը:
1.2. 6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են արտանկարել ոչ պրոֆեսիոնալ նկարներց և գործերից:		Ուստարվա ընթացքում ուսանողների հետ անցկացնել զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին:
1.3.3.Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ, ըստ անհրաժեշտության, բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների կողմից		Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ, ըստ անհրաժեշտության, բարձրաձայնվել են նկատված թերությունները,քննարկվել են ուսանողների կողմից դասախոսների վերաբերյալ անցկացված սոց հարցումների

		դասախոսների վերաբերյալ անցկացված սոց հարցումների արդյունքները, արվել են հետևություններ:		արդյունքները, անել հետևություններ:
1.4. 1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային հա-մակարգ՝ ուսումնա-ռության ռեսուրսների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորություններ ի կիրառություն ուսուցման գործընթացում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ անց է կացվել և՛ առկա դասընթացներ, և՛ հեռավար դասընթաց՝ ZOOM հարթակի միջոցով:		
1.4. 3. Վերապատրաս-տել դասախոսական կազմը ուսումնառու-թյան էլեկտրոնային ռե-սուրսների ստեղծման և մատուցման համար:	Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվեր-սալ էլեկտրոնային հա-մակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով ապահովվել են դասընթացները:		
1.4.5.Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպում:	Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:		Ուսումնական տարվա ընթացքում շարունակել ծրագրերի համար էլեկտրոնային տարբերակների մշակումն ու տեղադրումը համացանցում:
1.4.6. Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ դասախոսների համար:	Դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:			Համավարակի պատճառով ոչինչ չի պլանավորվել:
1.4.7.Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրակա-նացվող դասընթաց-ները:	Արդի պահանջներին համապատասխանող ուսուցման ապահովում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի միջոցով:		
2.1. 3. Խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսա-նողների ստեղծագործական աշ-խատանքների կատարումը և ղեկա-վարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում ստեղծագործական աշխատանքի նկատմամբ :	ԻՄ-ի ՈՒԳԸ-ի և գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ կապեր միմիանց հետ և համագործակցության բարձր ակտիվություն:		Ուսումնական տարվա ընթացքում խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների ստեղծագործական աշխա-տանքների կատարումը և ղեկավարումը, ցուցահանդեսների մասնակցությունը:

2.2.1.Աջակցել մշակույթային կենտ-րոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրականացմանը:	Մարզի անհատ ստեղծագործողների հետ կապի ամրապնդում՝ մարզում մշակութային միջավայրի զարգացման նպատակով:	Մայիսի 17-ին կիրառական արվեստի ֆակուլտետի II և III կուրսի ուսանողները ճանաչողական այցը Կողբի գեղարվեստի դպրոց:		Ուսումնական տարվա ընթացքում աշխուժացնել մարզի մշակույթային կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ:
2.3.3.Կազմակերպել արվեստին վերաբերվող մշակույթային միջոցառումներ, ուսանողների և մասնաճյուղի դասախոսների մասնակցությամբ:	Համագործակցային փոխհարաբերություն ների ձևավորում տարբեր կազմակերպությունն երի հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի դասախոսների և ուսանողների մաս-նակցության աճ:	Ապրիլի 23-ին Գյումրիում Ռուսական տան հետ համագործակցության շրջանակներում Շիրակի պետական համալսարանի աշխատանքային խումբն այցելել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ:		Շիրակի պետական համալսարանի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նախնական պայմանավորվածություն ձեռք բերեցին փորձի փոխանակման նպատակով համատեղ պլեներներ կազմակերպել՝ արվեստի ամբիոնների ուսանողների մասնակցությամբ:
2.3. 4. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարու-նակականությանն ու խորացմանը:	Համագործակցություն արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ:	Մայիսի 1-ին ԵՊՀ ԻՄ-ում հյուրընկալվել է հարգարժան Նատալյա Ռոտենբերգը, ով հանդիսանում է NR Foundation-ի հիմնադիրը: Նատալյա Ռոտենբերգը ներկաների համար անց կացրեց վարպետության դաս «Լուսավորելով երազանքի ճանապարհը» թեմայով:		
8.1. 2. Ակտիվացնել մասնաճյուղի մասնակ-ցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրություն՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազ-գային դրամաշնորհներից ակնկալվող դրական հոսքերից օգտվելու ձգտում:			

Ամբիոնի վարիչ՝ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ